

## ՊԵՏԱԿԱՆ

### ՊԵՏԱԿԱՆ ՈՒՅԻՐԸ

1307 Նոյեմբեր 17ին, Անարգարայի Դղեակին ստորոտը, քստմնելի ոճիր մը կատարուեցաւ: Հայոց դաշնակից թաթարներու զօրապետը՝ Պիլարդու, սպաննել տուաւ Հայոց Հեթում Բ. և Լևոն Գ. թագաւորները, Օշին սպարապետը և Պարոն Վասակը, և ուրիշ շատ իշխաններ: Այս սահմակեցուցիչ արարքին շարժառիթը կամ պատճառը կ'արժէ որ քննութեան առնուի և եթէ կարելի է լուսարանուի:

Ինչո՞ւ Պիլարդու սպաննել տուաւ Հայոց թագաւորներն ու իշխանները: Այդ ոճիրը ա) վերին իշխանութեան, այսինքն Ղարաթայ իմանի՞ն հրահանգով, բ) քստ հայ իշխաններու՝ թեւազրութեամբ, թէ գ) իր անձնական նախաձեռնութեամբ կատարեց ան: Քննենք այս երեք պարագաները մի առ մի:

Ա. — Ղարաթայ իմանը համամիտ էր այդ ոճրին: Ոչ, Վասնզի երբ Ալինախ,

Հեթումի եղբայրը, գնաց Դավթէ, մեծ իման մօտ բողոքի, իմանը ահա կոչել առաջի երեսաց իւրոց զԲիլարդու և հաստատեցաւ նենգութիւնն, զոր արարեալ էր նորա. առէ իման մեծ ցԱլինախ, Տեօանես, տէր, զթշնամին՝ որ նենգութեամբ դաւաճանաց արքայիդ, և աշխարհին, ա'յնպէս որպէս ասացեր. և որ չէր եղեալ նաճուրեամբ մերովս (Դարգել, էջ 25-26). և ստիպեց Ալինախը որ իր ձեռքով իսկ սպաննէ դաւաճան Պիլարդուն:

Բ. — Հայ իշխաններ բաժին ունին այդ ոճրին մէջ: Ժամանակակից պատմիչներ և յիշատակագիրներ չունին այդպիսի ակնարկութիւն: Չամչեանցն է որ կ'ըսէ, «ի սաստկանալ, առեւութեանն՝ յորդորեալ ոմանք յիշխանաց ի դիւէ [1] գնացին առ Պիլարդու իշխանն թաթարաց ... և շարժեցին զնա չարաչար բանիւք ի վերայ Լևոնի և Հեթումոյ» (Պատմութիւն Հայոց, Հատոր Գ., 1786, էջ 311): Չամչեանցի այս ծանրակշիռ հաստատումը պատմական հիմէ գուրկ է, և ծնունդ է կրթի և մուսուլմանութեան: Իր ձգտումն է կարծես՝

#### ՄԺ.

Եւ ազգըն Բամայ է Բուշ, Մեսրայիմ հայրըն Ներրովթայն, Ներրովթ էր խըրոխտ անյաղթ, եւ հըսկայ որսող վիպական:

#### ՄԺԱ.

Բաբ եւ Անեթիս, Արբէլ, Նինոս եւ Նինուաս մետասան, սակաւք են սոցա բարին, մինչ եհաս բանըն հայրական:

#### ՄԺԲ.

Իսկ Սեմ զԱրփաբսաթ ծընաւ, Արփաբսաթ զկախարդ Կայինեան, սա բախտ ճակտագիր ասաց, եւ եղիւ զիւաց քնակարան:

#### ՄԺԳ.

Յորժամ նա սատակեցաւ, իւր որդիքն ի հայրն ի նրման, արարին նրմա պատկեր, եւ սկըսաւ պաշտօն զիւական:

#### ՄԺԴ.

Նայ էր եղբայր Սաղայի, որ ծընաւ զԵրեմ բարեբանն, Երեմ հայրն Երայեցոց, յաշտարակըն չէր միաբան:

(21)

Ն. ԵՊՍ. ՆՈՎԱԿԱՆ

ՄԺ. — 1. — Մեսրայիմ, և Ներրովթան, Ը:

2. — Վիպասան, ԹԺ. Վիպասան, և:

ՄԺԱ. — 1. — Բաբ եւ Անեթիս Արբէլ, Ի. Բաբ և Անեթիս Արպէլ, Ը:

ՄԺԲ. — 1. — Կայինայն, 2ԺԵ. Կայինայն, Թ. Կայինայն, և:

2. — ճակտագիր, 2ԺԺԻ:

ՄԺԳ. — 1. — բարեբան, 2ԺԺԵ:

ահաւոր այդ ոճին պատասխանատուութիւնը գնել հայ իշխաններու վրին: Բայց այս պարագային բարեբախտաբար աւելի արդարամիտ գտնուած է Ղարաթաթայ իմանը և պատժած իսկական յանցաւորը՝ դաւաճան Պիլարզուն:

Գ. — Պիլարզունի ոճիւրը անձնական նախաձեռնութեան արդիւնք էր: Այո՛, պիտի պատասխանենք նկատի առնելով ժամանակակից վկայութիւնները: Ահաւասիկ թէ ինչ կ'ըսեն անոնք:

1. — Անանուն յիշատակագիր մը կը գրէ. «Ի թուականին Հայոց ԶԾԶ, ի նոյնմբերի ի Ժէ աւրն սպանաւ աւագ պարոն Հայոց Հեթում և զեղուղէ և ամենաբարի պատանին, եղբաւր որդին իւր՝ Լէոն, որդի պարոն Թարոսի, ի ստորոտս Անարզարու, յանաւրեմ Պիլարզոյէ, և սուգ մեծ թողին ազգիս Հայոց: Արդ, . . . յիշեցէք . . . զՀեթում և զբարեպաշտ թագաւորն զԼէոն, որ Եմանասակեցան ի վերայ ազգիս Հայոց . . . : Նայ և զԵմանասակիցս ցոյցին՝ զԱւելին՝ ասպարապետն Հայոց և զպարոն Վասակ՝ հաւրեղբայրն իւրեանց»: — Լ. Ս. Սալիկեան, ԺԳ. Դարի Հայ Զ. Յիշատակարաններ, էջ 55:

2. — Դրիգոր Դրիւ, որդի Յոհանէս Բահանայի, կը գրէ. « . . . որ յայսմ ամի անաւրեմ զիսաւորն Պիլարզուն՝ յազգէն նետողաց, պատրաստէ եսպան զդեռարոյս մանուկն և զնոր աւժեալ թագաւորն Լէոն, և զաւագ պարոնն Հեթում, և զայլ իշխանս . . . »: — Նոյն, էջ 56:

3. — Սամուէլ Անեցիի ժամանակագրութիւնը շարունակողը կը գրէ. «Ի ԶԾԶ թվին եկեալ ցենցուրեամբ յաշխարհն Կիլիկեցոց՝ սիրոյ(\*) ազագաւ անօրեմ Նուրն Պիլարզուն՝ և կոչեցեալ առ ինքն խորամանկութեամբ՝ իբրեւ ի խորհուրդ զաւագ Պարոնն Հեթում, և նա ոչ զիտացեալ ըզցենցուրիւն նորա, գնաց առ նա՝ ունելով ընդ իւր զնոր օծեալ տղայ թագաւորն Լէոն զեղբորորդին իւր, զՕշին Սինէգալն, որ յայնժամ Գունդըստապլն էր, և զայլ բազում իշխանս, որք իբրեւ եկին առ նա՝ յարեաւ ի վերայ և եսպան զամենեանն՝ առ սոս Անարզարու. եւ կամեւ զԿիլիկիայ յինքն յափճակել»: — Սամուէլ Անեցի, Հրատ. Ա. Տէր Միքեղեան, էջ 155-6:

Ահաւասիկ շարք մը վկաներ որոնք կը շեշտեն թէ անօրեմ Պիլարզուն ցենցուրեամբ և խորամանկութեամբ խաբեց Հայոց թագաւորներն ու իշխանները և սպաննեց զանոնք դաւաճանօրեմ, զասնդի «կամեւ զԿիլիկիայ յինքն յափճակել»: Այս է դէպքը իր պատմական իսկութեան մէջ, որքան որ տեղեկացուցած են մեզի անկորուստ Տնացած ժամանակակից աղբիւրներ:

Հիմա գանք նորագոյն գրողի մը — Հ. Գր. Սարգիսեան — որ «Բագմավէպ»ի մէջ կ'անդրադառնայ Պիլարզունի ոճիւրին և կը գրէ թէ «Այս տխուր դէպքը . . . ցաւու սուգ պիտի պատճառէ միշտ ամէն հայուն», և թէ այդ «արարքին մէջ Հայոց միջամտութիւնը անստոյգ է» (Բագմ., 1949, էջ 62, ծնթ.): Ապա կ'աւելցնէ սա տողերն ալ, թէ «Տէր Միքեղեան, ըստ Օրմանեանի (Ազգայ. թ. 1247) արդէն մեզմէ առաջ և իրաւամբ՝ Զամինեանի կարծիքն՝ իբր չարամիս թելագրութիւն որակած է» (Անդ, էջ 63):

Հոս ծանր սխալ մը գործած է Գր. յօդուածագիրը, ուղիղ չըմբռնելով Օրմանեանի գրածը: Օրմանեան կը գրէ. «Զամեան, Պիլարզուն յառաջագոյն ռխացեալ կ'ըսէ, առանց ծագումը պարզելու, և վերջէն գրգռուիլը Սոյ կանոններուն պատճառով սասկացեալ անելութեանց և իշխանաց ունեց ջստութեան կը վերագրէ (Զամ. Գ. 311) և Զամինեան ալ Հայերը Պիլարզունի մօտ զանգատուոր գացած կ'ընդունի (Զամ. Գ. 257), մինչ Տէր Միքեղեան այդ տեսակ մեկնութիւնը չարամիս թելագրութիւն կը կարծէ (Սամ. 299)»:

Օրմանեանի այս գրածէն բնաւ չի հետեւիր թէ Տէր Միքեղեան չարամիս կ'որակէ Զամինեանի՝ կարծիքը. այդ վերագրումը կ'երթայ բուն աղբիւրին՝ Զամեանցի: Տէր Միքեղեանի տողերը ո՛չ մէկ կասկած կը թողուն այդ մասին. ան կ'ըսէ, թէ Հեթումի և Լէոնի սպաննուիլը Պիլարզունէն, «չարամիտ Հոսովմէականները վերագրում են . . . Հայոց դրդման» (Սամ. Անեցի, էջ 299):

Ուրեմն Հ. Գր. Սարգիսեան անգիտակցաբար իրաւունք կու տայ Տէր Միքեղեանին, որ այդ կարծիքը չարամիս որակած է. երանի՜ թէ զիտակցաբար ևս ընդունէր որ իսկապէս չարամիս այդ կարծիքին հայրը ոչ թէ Զամինեանն է այլ Զամեանցի:

Ն. ԵՊՍ. ՄՈՎԱԿԱՆ

(\*) Տպ. որոյ, որ յայտնապէս սխալ է: